ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով թղթի ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-Թ-19/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 11.03.2019թ. ժամը 11-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Կ.Հովհաննիսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Հովսեփյանը, Վ.Մկրտչյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-Թ-19/2» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«Սմարթլայն» ՍՊԸ (ք. Երևան, Վարդանանց 110)**
2. **«Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ (ք. Երևան, Կոմիտաս 49)**
3. **«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ(ք. Երևան, Մաշտոցի 16Ա 4)**

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը

Հ/Հ	Անվանում	Քանակ	Նախահաշվային գին	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/		
				«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ	**«Սմարթլայն» ՍՊԸ**	**«Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ**
1	թուղթ, A4 ֆորմատի	62500	37500000	33906250	35000000	36250000

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովը արձանագրեց, որ կազմակերպությունների առաջարկած գները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Անհրաժեշտություն է առաջացել վարելու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու համար հաջորդ նիստը հրավիրել **2019թ. մարտի 14-ին, ժամը 11:00-ին,** ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում, 621 սենյակում:

Քարտուղարին՝

Մեկ աշխատանքային օրում կազմակերպություններին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Կ.Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա.Հովսեփյան

_____ Վ.Մկրտչյան

_____ Մ.Անտոնյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան